# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ա կ ն ա ր կ)

Գրեց. Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Մոսկուայում կայացաւ ՍՍՌՄ Միութենական ռեսպուբլիկաների Գիտութիւնների Ակադեմիաների գիտական գործունէութեան նուիրուած խորհրդի նստաշրջանը։ Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էին Սովետական Միութեան խոշորագոյն գիտնականները։

Արտայայտելով նստաշրջանի մասնակիցների ընդհանուր կարծիքը. ՍՍՌՄ Գիտութիւնների Ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Ս. Ի. Վավիլովը նշեց, մասնաւորապէս, մեծ առաջադիմում գիտութեան մէջ՝ Անդրկովկասեան ռեսպուբլիկաներում։ Խոշոր արդիւնք է տուել այդ ռեսպուբլիկաների գիտական ուժերի միաւորման փորձը՝ գիտական ու գործնական խոշոր պրոբլեմներ լուծելիս։

Մեծ հետաքրքրութիւն առաջացրեց նստաշրջանում Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Ա. Համբարձումեանի զեկուցումը հայ գիտնականների գործունէութեան մասին։ Նստաշրջանը նշեց նրանց յատուկ յաջողութիւնները ֆիզիկա-մաթեմատիկական գիտութիւնների բնագաւառում։

Նստաշրջանի մասնակիցները մեծ բաւարարութեամբ ընդունեցին Վ. Ա. Համբարձումեանի յայտարարութիւնը Հայաստանի և Վրաստանի Ակադեմիաների միջև ստեղծագործական կապի ամրացման մասին։ Մասնաւորապէս, նրանք միասին են լուծում կարևորագոյն գիտական պրոբլեմներ հասարակական գիտութիւնների բնագաւառում։

XXX

Անցեալ տարի արտասահմանից հայրենիք վերադարձած հայերը բնակութիւն են հաստատել Հայկական ՍՍՌ Վեդիի շրջանի «Նոր Կեանք» գիւղում։ Այստեղից սովետական նոր քաղաքացիների համար կառուցուած են 100-ից աւելի տներ։

Ներկա «Նոր Կեանք» գիւղը անցկացուած է հեռախօսագիծ. որ կապեց գիւղը շրջանային կենտրոնի հետ։ Ռադիոֆիկացուած է կոլխոզի նոր անդամների 120 տուն։ Կիրառուած են զանազան աշխատանքներ գիւղի հետագայ բարեկարգութեան գծով։

XXX

Հայաստանի Ախուրեանի շրջանից Խարկովի մարզը (Ուկրաինական ՍՍՌ) մեկնեց կոլխոզնիկների ու կոլխոզնիկուհիների մի խումբ՝ բարձր բերքի առաջաւոր վարպետների —Սոցիալիստական աշխատանքի Հերոսների փորձը ուսումնասիրելու համար։ Պատգամաւորութեան կազմի մէջ են՝ Ղարիբջանեան գիւղի կոլխոզի անւան օղակավարուհի, Հայկական ՍՍՌ Գերագոյն Սովետի դեպուտատ Գ. Ղազարեան, Ազատան գիւղի կոլխոզի նախագահ Ս. Քոթանեան, օղակավարուհի Դ. Խաչատրեան և ուրիշները—ընդամենը 10 մարդ։

Հայ կոլխոզնիկները պատրաստւում են լայնօրէն տարածել հողագործութեան ուկրաինական վարպետների առաջաւոր փորձը իրենց կոլխոզների դաշտերում և անկորաններում։

---

վրդի անանդեակ լինելու, անջատ բանակցութիւն են վարել հիտլերականների հետ։

Եւ վերջապէս, դարձեալ մի իրողութիւն, շատ յայտնի է, որ Հիթլերի, Հիմմլերի և Գէօրինգի հրամանով, պատերազմի վերջին շրջանում, Գերման բանակը կատաղի դիմադրութիւն ցոյց տուեց միմիայն Սովետական զօրքերին։ Արևմուտքում, գործնականապէս ճանապար արդէն բացուած էր ամերիկեան բանակների առաջխաղացման։

(Վերջը յաջորդիւ)

---


## ԿԱՐԻՔ ԿԱՅ

Ղազւինի Հայոց ազգային «Րաֆֆի» Դպրոցը կարիք ունի մի Տիկնոջ, որն ունենայ կրթական նախարարութիւնից վկայական։

Կարիք ունենք նաև Մանկական Պարտէզի Ուսուցչուհու։(որն ունենայ փորձառութիւն)

Պայմանների մասին դիմել հետևեալ հասցէին:
Ղազւինի հայոց «Րաֆֆի» Դպրոցի գործակալութեան:
ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.